Արձանագրություն N 5

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

18.01.2019 թ.
ժ. 10:00

Մասնակցում են

Հանձնաժողովի նախագահող՝ ՝ Է. Ղազարյան (ԳԱ)
Հանձնաժողովի անդամներ՝) Ա. Գասպարյան (ԳԱ)
Գ. Սաֆարյան (ԲԱ), Մ. Վաթինյան (ԲԱ)
Բացակայում է՝ Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Մարտիրոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հուրոյան

I. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին
(Է. Ղազարյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում է ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն սահմանված ժամկետում ներկայացրել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցների «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին բացառությամբ՝ **«Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ**-ի,«**Նոր Նորք կանաչապատում» ՓԲԸ** –ի և **«Արաբկիր Կամար» ՓԲԸ –ի:**

---- **«Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ**-ն հայտը ներկայացվելու օրվա դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 915.000 /ինն հարյուր տասնհինգ հազար/ ՀՀ դրամի չափով,

----«**Նոր Նորք կանաչապատում» ՓԲԸ** -ն հայտը ներկայացվելու օրվա դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 4.344.017 /չորս միլիոն երեք հարյուր քառասունչորս հազար տասնյոթ/ ՀՀ դրամի չափով,

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 44-րդ կետի՝ որոշեց մերժել **«Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ** –ի և **Նոր Նորք կանաչապատում» ՓԲԸ** հայտերը,

«Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգի 6-րդ և 11-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած:

--- **«Արաբկիր Կամար» ՓԲԸ -ն** հայտը ներկայացվելուն տարվան նախորդող տարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը 28.710.800 ՀՀ դրամ պակաս է պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքից 34.957.500 ՀՀ դրամ, որը հրավերի պահանջներին չի բավարարում:

Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 47-րդ կետով՝ նիստը կասեցրեց և առաջարկեց **«Արաբկիր Կամար» ՓԲԸ** –ին 1 աշխատանքային օրվա ընթացքում (մասնակցին ծանուցելու պահից հաշված) շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման մասին

(Է. Ղազարյան)

2.1 Գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել Մասնակցի կողմից անհամապատասխանության փաստաթղթերը ներկայացնելու կամ չներկայացնելու օրվան հաջորդ աշխատանքային օրվա ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Արգիշտիի փողոց 1 հասցեում

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Է. Ղազարյան
Անդամներ՝		Ա. Գասպարյան
		Գ. Սաֆարյան
		Մ. Վաթինյան
Քարտուղար՝		Գ. Հուրոյան

Արձանագրություն N 6
«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 23.01.2019 թ.
ժ. 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահող՝ Է. Ղազարյան (ԳԱ)
Հանձնաժողովի անդամներ՝) Ա. Գասպարյան (ԳԱ)
Գ. Սաֆարյան (ԲԱ), Մ. Վաթինյան (ԲԱ)
Բացակայում է՝ Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Մարտիրոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հուրոյան

1. <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2>> ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցի կողմից անհամապատասխանություն շտկելու մասին

(Է. Ղազարյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ 17.01.2019 թ–ին տեղի է ունեցել, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին նիստ, որի ժամանակ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ներկայացված հարցման եզրակացությունում հայտնաբերվել է անհամապատասխանություն հրավերով սահմանված պայմանների նկատմամբ և նիստը կասեցվել է:

1.2 21.01.2019թ-ին ոչ ավտոմատ ծանուցման **«Արաբկիր Կամար» ՓԲԸ-ին** ուղարկվել է անհամապատասխանությունը շտկելու ծանուցում որը՝ **«Արաբկիր Կամար» ՓԲԸ** -ի կողմից անհամապատասխանություն չի շտկվել

Գնահատող հանձնաժողովը ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն **«Արաբկիր Կամար» ՓԲԸ** –ի կողմից ներկայացված հայտը գնահատեց անբավարար և մերժեց:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

2. <u>Հայտի /որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր/ գնահատման արդյունքները</u>

(Է. Ղազարյան)

2.1 «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող ճանաչված Մասնակիցները, հրավերով սահմանված ժամկետում, ներկայացրել է որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
1	«Նուբարաշեն» ՓԲԸ	Բավարար
2	«Քանաքեռ–Զեյթուն Բարեկարգում» ՓԲԸ	Բավարար
3	«Դավթաշենի Կանաչապատում» ՓԲԸ	Բավարար
4	«Շենգավիթ-Կանաչապատում» ՓԲԸ	Բավարար
5	«Վարդավառ զբոսայգի» ՓԲԸ	Բավարար

6	«Աջափնյակ Կանաչապատում» ՓԲԸ	Բավարար
7	«ԱԳՐՈԱՏՈՄ» ՍՊԸ	Բավարար
8	«Ավան Կանաչապտում» ՓԲԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

3.«ԵՔ-ԲՄԱԾՁԲ-19/2» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Է. Ղազարյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ **«ԵՔ-ԲՄԱԾՁԲ-19/2»** ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել

-- 1-ին չափաբաժնի մասով «Դավթաշենի Կանաչապատում» ՓԲԸ –ին,
-- 2-րդ չափաբաժնի մասով «Քանաքեռ-Զեյթուն Բարեկարգում» ՓԲԸ –ին,
- 3-րդ չափաբաժնի մասով «Շենգավիթ-Կանաչապատում» ՓԲԸ –ին,
-- 4-րդ չափաբաժնի մասով «Նուբարաշեն» ՓԲԸ –ին,
- 5-րդ չափաբաժնի մասով «ԱԳՐՈԱՏՈՄ» ՍՊԸ –ին,
- 7-րդ չափաբաժնի մասով «Վարդավառ զբոսայգի» ՓԲԸ –ին,
10-րդ չափաբաժնի մասով «Ավան Կանաչապտում» ՓԲԸ –ին,
12-րդ չափաբաժնի մասով «Աջափնյակ Կանաչապատում» ՓԲԸ –ին,

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

4. Աշխատանքների կատարման գնման պայմանագրեր կնքելու որոշում ընդունելու մասին

(Է. Ղազարյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝

--- Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել մասով «Դավթաշենի Կանաչապատում» ՓԲԸ ---ին:

-- Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել մասով «Քանաքեռ-Զեյթուն Բարեկարգում» ՓԲԸ –ին :

-- Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել մասով «Շենգավիթ-Կանաչապատում» ՓԲԸ –ին :

--- Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել մասով «Նուբարաշեն» ՓԲԸ –ին :

---Երևան քաղաքի Նորք Մարաշ վարչական շրջանի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել մասով «ԱԳՐՈԱՏՈՄ» ՍՊԸ-ին :

- Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել մասով «Վարդավառ զբոսայգի» ՓԲԸ -ին:

-- Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել մասով «Ավան Կանաչապատում» ՓԲԸ -ին :

-- Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել մասով «Աջափնյակ Կանաչապատում» ՓԲԸ -ին:

4.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ տաս օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

5.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Է. Ղազարյան)

5.1 Հանձնաժողովը որոշեց՝ գնման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագրերը կնքելու կամ ընթացակարգի արդյունքում պայմանագրեր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդ օրը ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Է. Ղազարյան
Անդամներ՝		Ա. Գասպարյան
		Գ. Սաֆարյան
		Մ. Վաթինյան
Քարտուղար՝		Գ. Հուրոյան